1) Համայքնի բնակավայրերում աղբահանության աշխատանքների իրականացում,
2) Համայնքի բնակավայրերում սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում,
3) Համայնքի բնակավայրերում անձրևատար ցանցերի ընթացիք վերանորագմում, շահագործում և պահպանություն,
4) Համայնքի բնակավայրերում ոռոգման ջրի համակարգերի կառուցապատում, վերանորագմում, շահագործում և պահպանություն,
5) Համայնքի գյուղական բնակավայրերի խմելաջրի համակարգի կառուցապատում, վերանորագմում, շահագործում և պահպանություն,
6) Համայնքի բնակավայրերում աղբահանության և խմելու ջրի վարձերի հավաքագրում,
7) Համայնքի բնակավայրերում բազմաբնակարանային բնակելի և ոչ բնակելի, ինչպես նաև Համայնքին պատկանող բնակելի և ոչ բնակելի շենքերի կոյուղատարերի վերանորգում,
8) Համայնքի բազմաբնակարանային բնակելի շենքերի վերելակների ընթացիք վերանորոգում,
9) Համայնքի քաղաքային բնակավայրերի բնակիչների փաստացի բնակության վայրի տվյալների հաշվառում և տեղեկանքների տրամադրում,

10) Համայնքի բնակավայրերի գերեզմանատների պահպանության աշխատանքների իրականացում:

## 3. Կազմակերպության կառավարումը

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը և նրա տեղակալը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:
3.2. Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) Կազմակերպության հիմնադրումը,
բ) Կազմակերպության գործունեության առարկային և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականցվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:
ե) Հաստատում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
3.4. Համայնքի ղեկավարը իրականցնում է Կազմակերպությունում ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց ոչ պատշաճ կատարման համար:

3.5. Համայնքի ղեկավարը՝
ա) Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
բ) Իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,
գ) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,
դ) Լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,
ե) Վերահսկողություն է իրականցնում Կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
զ) Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված

դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքը խոտանման կամ վարձակալության հանձնման համար,
է) Հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
ը) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և(կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
թ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
ժ) Իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.6. Կազմակերպության գործադիր մարմինը՝
ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենն, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության տնօրենն օրենքով Հիմնադրի ու Համայնքի ղեկավարը որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարը որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,
բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը,
գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին,
դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից,
ե) Տնօրենի պաշտոնին նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանն պատճառած վնասի համար,
զ) Կազմակերպության գործադիր մարմնին նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.7. Կազմակերպության տնօրենը.
ա) Առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
գ) Տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
դ) Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում

կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծելու դեպքում աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին),
ե) Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
զ) Կատարում է աշխատանքի բաշխում,
է) Սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
ը) Օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
թ) Ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում Համայնքի ղեկավարին,
ժ) Իրականցնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

## 4 . ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Համայնքի ղեկավարի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Համայնքի ղեկավարի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:
4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
4.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:
4.6. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:
Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշմամբ:
Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի կողմից սահմանված դեպքերի:
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:
4.7. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:
4.8. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
4.9. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:
4.10. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:
4.11. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:
4.12. Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:
4.13.Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:
4.14. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:
4.15. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:
4.16. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

5.2. Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Համայնքի բյուջե:
5.3. Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Աշխատակազմի քարտուղար՝ [signature] Մ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 166-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ) ՆՈՐ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի սեփականությունը հանդիսացող Գետաշեն գյուղի վարչական շենքից 80,9 քմ մակերեսով տարածքի (սեփ վկայական N 2330472) նկատմամբ Ժորա Կոլյայի Գրիգորյանի հետ կնքված վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ նրա հետ կնքել 15 տարի նոր ժամկետով պայմանագիր՝ տարեկան վարձավճարը սահմանելով 16000 (տասնվեց հազար) ՀՀ դրամ :

2. Վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 167-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՊԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ, 9-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ և 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՄԱՅԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՄՐԳԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշումը ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 2-րդ, 9-րդ փողոցների և 9-րդ փողոցի 1-ին նրբանցքի ճանապարհահատվածների ասֆալտապատում, մայթերի կառուցում և ջերահեռացման համակարգի կառուցման, Մրգաշատ բնակավայրի 9-րդ փողոցի ասֆալտապատման» սուբվենցիայի ծրագրային հայտը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ՁԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 13-ի
N 167-Ա որոշման

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 2-րդ, 9-րդ փողոցների և 9-րդ փողոցի 1-ին նրբանցքի ճանապարհահատվածների ասֆալտապատում, մայթերի կառուցում և ջրահեռացման համակարգի կառուցում, Մրգաշատ բանակավայրի 9-րդ փողոցի ասֆալտապատում:* |
| Մարզ | *Արմավիրի մարզ* |
| Համայնքը /համայնքները | *Մեծամոր համայնք Նորապատ և Մրգաշատ բնակավայրներ* |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | ***Նորապատ բնակավայր՝*** *հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 45 կմ, մարզկենտրոնից՝ 2 կմ*<br><br>***Մրգաշատ բնակավայր՝*** *հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 42կմ, մարզկենտրոնից՝ 5կմ* |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | *Մեծամոր խոշորացված համայնքը՝ 80.284 բնակիչ*<br>*Նորապատ բնակավայր՝ 2.441 բնակիչ*<br>*Մրգաշատ՝ 5.816 բնակիչ* |
| Սահմանամերձ համայնք/բնակավայր | *Նորապատ՝ սահմանամերձ չէ* |
| Բարձր լեռնային համայնք /բնակավայրի | *Բարձր լեռնային բնակավայրներ չեն* |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | *Նորապատ՝ ոչ*<br>*Մրգաշատ՝ ոչ* |
| Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, | ***Նորապատ բնակավայրում*** *առկա է շուրջօրյա ջրամատակարարում, որից օգտվողների թիվը կազմում է 95%:*<br><br>***Մրգաշատ բնակավայրում*** *առկա է շուրջօրյա ջրամատակարարում, որից օգտվողների թիվը կազմում է 98%:* |
| - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, | ***Նորապատ բնակավայրը*** *գազաֆիկացված է և օգտվողների թիվը կազմում է բնակավայրի 98%:*<br><br>***Մրգաշատ բնակավայրը*** *գազաֆիկացված է և օգտվողների թիվը կազմում է բնակավայրի 95%:* |

| | |
|---|---|
| - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, | ***Նորապատ բնակավայրում*** *ոռոգման համակարգից օգտվում է բնակչության 100%-ը, բնակավայրում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածները կազմում են 100%:*<br><br>***Մրգաշատ բնակավայրում*** *ոռոգման համակարգից օգտվում է բնակչության 90%-ը, բնակավայրում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածները կազմում են 80%:* |
| - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | ***Նորապատ բնակավայրում*** *լուսավորության համակարգի առկայությամբ փողոցները կազմում են 100%, առկա է էներգախնայող ԼԵԴ լուսավորություն:*<br><br>***Մրգաշատ բնակավայրում*** *լուսավորության համակարգի առկայությամբ փողոցները կազմում են 50% և մասնակի առկա է էներգախնայող ԼԵԴ լուսավորություն:* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Նորապատ բնակավայրը հիմնադրվել է 1928 թվականին: Նորապատ բնակավայրի վարչական տարածքը 382,6 հա է, գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Բնակավայրը սահմանակից է Մրգաշատ, Հացիկ, Սարդարապատ բնակավայրերին և ք. Արմավիրին:*<br>*Բնակավայրում գործում է 1 դպրոցական, 1 նախադպրոցական հաստատություն, 1 մշակույթի տուն բժշկական կենտրոն և այլ հասարակական օբյեկտներ: Բնակավայրը ուղիղ տրասպորտային կապ ունի մայրաքաղաք*<br>*Երևանի և մարզկենտրոն՝ Արմավիրի հետ:*<br>*Բնակչության մի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ մասնավորապես այգեգործությամբ:*<br>*Բնակավայրերի փողոցների և նրբանցքների ասֆալտապատման, բետոնապատման և փոսալցման աշխատանքների կարևորությունը կայանում է նրանում, որ դրա իրականացմամբ ապահովվում է անվտանգ երթևեկությունը և մարդկանց բնականոն տեղաշարժը: 2-րդ և 9-րդ փողոցներում է գտնվում կոյուղին, որը շահագործման գրեթե ենթակա չէ: 2024 թվականի ծրագրով նախատեսվում է իրականացնել կոյուղու փոխարինում, որի իրականացմամբ նպատակային է համարվում իրականացնել նաև վերոնշյալ փողոցների ասֆալտապատում: Նորապատ բնակավայրի 2-րդ և 9-րդ փողոցների ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների կատարումը հանդիսանում է առաջնահերթություն, քանի որ այդ հատվածում են գտնվում բնակավայրի հիմնական ենթակառուցվածքները՝ Նորապատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, նախադպրոցական հաստատությունը, բուժամբուլատորիան: Ծրագրի իրականացմամբ իրականություն կդառնա բնակչության սոցիալական պայմանների բարելավումը, բարենպաստ միջավայրի ստեղծումը, դպրոցահասակ և նախադպրոցական տարիքի երեխաների ապահով և անվտանգ տեղաշարժը, ինչպես նաև որոշ չափով կբարելավվի բնակավայրի արտաքին տեսքը:*<br><br>***Նորապատ բնակավայրի 2-րդ փողոց*** |

| | |
|---|---|
| | *Երկարությունը՝ 160 մ*<br>*Լայնությունը՝ 7 մ*<br>*Մայթերի լայնությունը՝ 1.2 գծ.մ*<br>*Մակերեսային ջրերի ջրահեռացման լայնոթյունը՝ 40 սմ*<br>*Մակերեսը՝ 1.120 քմ*<br><br>***Նորապատ բնակավայրի 9-րդ փողոց***<br>*Երկարությունը՝ 1100 մ*<br>*Լայնությունը՝ 7 մ*<br>*Մայթերի լայնությունը՝ 1.2 գծ.մ*<br>*Մակերեսային ջրերի ջրահեռացման լայնոթյունը՝ 40 սմ*<br>*Մակերեսը՝ 7.700 քմ*<br><br>***Նորապատ բնակավայրի 9-րդ փողոց 1-ին նրբանցք***<br>*Երկարությունը՝ 160 մ*<br>*Լայնությունը՝ 7 մ*<br>*Մայթերի լայնությունը՝ 1.2 գծ.մ*<br>*Մակերեսային ջրերի ջրահեռացման լայնոթյունը՝ 40 սմ*<br>*Մակերեսը՝ 1.120 քմ*<br><br>***Մրգաշատ բնակավայրի 9-րդ փողոց***<br>*Երկարությունը՝ 800 մ*<br>*Լայնությունը՝ 5 մ*<br>*Մակերեսը՝ 4.000 քմ*<br><br>***Ընդամենը՝ 13.940 քմ մակերես*** |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին | ***Ծրագրի իրականացման արդյունքում*** *կունենանք ասֆալտապատված ճանապարհ:*<br>***Ծրագրի իրականացման միջնաժամկետ արդյունքներ*** *կունենանք ասֆալտապատված և հարմարավետ ճանապարհ, որի հետագա շահագործումը կլինի արդյունավետ:*<br>*Ճանապարհը կշահագործվի 50 և ավելի տարիներ:* |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | ***Ծրագրի յուրաքանչյուր արդյունքին հասնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.***<br>– *ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում*<br>– *ասֆալտապատման աշխատանքների իրականացման մրցույթի հայտարարում*<br>– *հաղթող կապալառուի հետ պայմանագրի կնքում*<br>– *շինթույլտվության տրամադրում*<br>– *հիմնանորոգման աշխատանքների կատարման հատվածում նախապատրաստական աշխատանքների իրականացում*<br>*շինարարական աշխատանքների իրականացում:* |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության | *Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի ծախսեր են և կատարվում են ֆոնդային բյուջեի և պետական* |

<table>
<tr><td>իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի</td><td>բյուջեի միջոցներով:</td></tr>
<tr><td>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</td><td>Ծրագրի ուղղակի շահառուների քանակն է՝ բնակավայրի բնակչության 100%:</td></tr>
<tr><td>Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը</td><td>Ծրագրի իրականացման կստեղծվեն թվով 10 ժամանակավոր աշխատատեղեր, որոնք շինարարների և բանվորների համար նախատեսված աշխատատեղեր են:</td></tr>
<tr><td>Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը</td><td>Նախորդ տարվա բյուջեն՝ 2977267,2 դրամ.<br>Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:
<table>
<tr><th></th><th>Պլանը</th><th>Փաստացին</th><th>Տոկոսը</th></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները<br>այդ թվում՝</td><td>2977267,2</td><td>2715790,8</td><td>91,2</td></tr>
<tr><td>-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>2480670,3</td><td>2499820,4</td><td>100,8</td></tr>
<tr><td>- Սեփական եկամուտներ</td><td>897973</td><td>911522,7</td><td>101,5</td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>604824,6</td><td>215970,4</td><td>35,7</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,<br>որից՝</td><td>3566864,6</td><td>2885124,7</td><td>80,8</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի ծախսեր</td><td>2480670,3</td><td>2205687,9</td><td>88,9</td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td>1194422</td><td>679436,8</td><td>56,9</td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝</td><td>872134,8</td><td>523219,1</td><td>59,9</td></tr>
<tr><td>- ճանապարհաշինություն</td><td>139939,3</td><td>45310,0</td><td>32,3</td></tr>
<tr><td>- ջրամատակարարում</td><td>178978,0</td><td>158145,0</td><td>88,3</td></tr>
<tr><td>- փողոցային լուսավորություն</td><td>6945,1</td><td>6008,0</td><td>86,5</td></tr>
<tr><td>- գյուղատնտեսություն</td><td>257622,4</td><td>106882,5</td><td>41,4</td></tr>
<tr><td>-բնակարանային շինարարություն</td><td>138650,0</td><td>63921,7</td><td>46,1</td></tr>
<tr><td>-հողի օտարում</td><td>150000,0</td><td>142951,9</td><td>95,3</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն</td><td>3464995,4 դրամ.<br>Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:
<table>
<tr><th></th><th>Պլանը</th></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում<br>այդ թվում՝</td><td>3464995,4</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>3291829,0</td></tr>
<tr><td>- սեփական եկամուտներ</td><td>942300,0</td></tr>
<tr><td>- Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>330411,9</td></tr>
</table></td></tr>
</table>

| | |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | *3885422,9* |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | *3291829,0* |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | *750839,4* |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | *359911,4* |
| *-գյուղատնտեսություն* | *152939,4* |
| *-գազաֆիկացում* | *55298,0* |
| *-ճանապարհաշինարարություն* | *62000,0* |
| *-բնակարանային շինարարություն* | *70390,0* |
| *-ջրամատակարարում* | *19284,0* |
| *-հողի օտարում* | *150000,0* |

**Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը**

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ 3853682,1 դրամ.

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ *4117440,2* դրամ.

Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով

| | Ծրագրի իրականացման տարի-2024 | Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի-2025 |
|---|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի,** այդ թվում՝ | *3853682,1* | *4117440,2* |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | *3853682,1* | *4117440,2* |
| - Սեփական եկամուտներ | *1509382,4* | *1773140,5* |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | | |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի,** որից՝ | *3853682,1* | *4117440,2* |
| - Վարչական բյուջեի ծախսեր | *3853682,1* | *4117440,2* |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | *200000,0* | *200000,0* |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝** | *200000,0* | *200000,0* |
| - ճանապարհաշինություն | *50000,0* | *50000,0* |
| - ջրամատակարարում | | |
| - փողոցային լուսավորություն | | |
| - գյուղատնտեսություն | | |
| -բնակարանային շինարարություն | *60000,0* | *60000,0* |

| | | | |
|---|---|---|---|
| | -մանկապարտեզների կապիտալ նորոգում | *90000,0* | *90000,0* |
| | -հողի օտարում | *200000,0* | *200000,0* |
| | **ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝** */ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/* | | |
| | - ճանապարհաշինություն | | |
| | - ջրամատակարարում/ջրահեռացում | | |
| | - փողոցային լուսավորություն | | |
| | - գազամատակարարում | | |
| | - նախադպրոցական հաստատություններ | | |
| | - հասարակական շենքեր | | |
| | - գույքի, տեխնիկայի ձեռքբերում | | |
| | - | | |
| **Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համա- հարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ- ներով** | *Մեծամոր համայնքի 2024 թվականի բյուջով նախատեսվում է իրականացնել ծրագրեր ընդգրկված 29 բնակավայրերում: Նշված ծրագրերը իրականացնելու համար անհրաժեշտ է մեծ ֆինանսական միջոցներ: Սակայն, որպես նոր կազմավորվող համայնք նախատեվող ֆինանսական միջոցները չեն բավականացնում իրականցանել կապիտալ ծախսերի հետ կապված մեծ աշխատանքներ: Ուստի կարիք է առաջանում դիմել սուբվենցիոն ծրագրերի: Համայնքի բյուջի նախնական պլանը կազմում է* ***3 464 995 400*** *ՀՀ դրամ, իսկ համայնքներում նախնական հաշվարկով ծրագրավորվում է իրականացնել ավելի քան 3 125 000 000 ՀՀ դրամի ծրագրեր: Ընթացիկ, պահպանման և աշխատավարձին ուղղված ծախսերի, ինչպես նաև համեմատաբար քիչ ծախսեր պահանջող ծրագրերի հետ մեկ տեղ պլանային կանխատեսումը չի բավականացնում կապիտալ մեծ ծախսեր իրականցանելու համար:* | | |

| | |
|---|---|
| Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝<br><br>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը ________ դրամ,<br><br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ ________ դրամ,<br><br>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ ________ դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ ________ դրամ,<br><br>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ ________ դրամ,<br><br>ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ ________ դրամ<br><br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը ________ դրամ | *300 000 000 ՀՀ դրամ (100%)* |
| *Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը* | *195 000 000 դրամ (65%)* |
| *Այլ ներդրողներ* | |
| *Ծրագրի իրականացման փուլողությունը* | *Սկիզբը 01 ապրիլի 2024թ.*<br><br>*Տևողությունը 1 տարի* |
| *Ծրագրի ծախսերը* | *Ծրագրի արժեքը մանրամասն կներկայացվի նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռքբերելուց հետո* |
| *Ամսաթիվ* | *28 ապրիլի 2023թ.* |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան